Լեռնային Ղարաբաղի հայկական հուշարձանները վտանգված են

17.12.2020

Թարմացվել է 18.12.2020-ին, ժամը՝ 22:23-ին

Հայկական հուշարձաններ

ՊԱՏԵՐԱԶՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Մոռացված գանձեր. Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտությունում հայկական հուշարձանները մեծ վտանգի մեջ են: Դրանց վերջնական ավերումն անփոխարինելի կորուստ կլինի:

Ուլրիխ Բոկ

Կառուցվել է Հուդա (Թադեոս) առաքյալի աշակերտի՝ Սուրբ Դադի գերեզմանի վրա. Դադիվանք

Լուսանկարները տարածվեցին համացանցում և հասան համաշխարհային հանրությանը. լուսանկարներ ադրբեջանական անօդաչու սարքերի հարձակումների պատճառով խիստ վնասված Շուշիի մայր տաճարից, հարևան՝ իր կանաչ գմբեթի պատճառով Հայաստանում որպես Կանաչ ժամ (Կանաչ եկեղեցի) անունով հայտնի Հովհաննես Մկրտչի եկեղեցուց: Այժմ այն զրկված է իր՝ աչքի ընկնող երկու զանգակատներից, որոնք պայթեցրել են ադրբեջանցի զինվորները: Նրանք մի այլ վայրում՝ Կուբաթլիում հանդիսավոր կերպով մեծարվեցին՝ որպես քրիստոնեական-հայկական մշակութային հուշարձանների ավերիչներ և նկարահանվեցին: Նրանց՝ «Ալլահ Աքբար» բարձր աղաղակներով ուղեկցվող «հաղթական կեցվածքը» շրջանառվում էր համացանցում:

Հայաստանի և Ադրբեջանի միջև վերջին ռազմական առճակատման ժամանակ «պատերազմի բախտը» շրջվեց հօգուտ ադրբեջանցիների՝ այժմ Թուրքիայի եռանդուն աջակցությամբ: Նոյեմբերի 10-ին Ռուսաստանի միջնորդավորած հրադադարի համաձայնագրով Հայաստանը ստիպված է զիջել Լեռնային Ղարաբաղի շուրջ գտնվող՝ նախապես ադրբեջանական բոլոր յոթ շրջանները: Լեռնային Ղարաբաղը կրկին դառնում է միայն Լաչինի վարչաշրջանի հինգ կիլոմետր լայնությամբ միջանցքով Հայաստանի Հանրապետության հետ կապված էքսկլավ: Հայերի համար հատկապես ծանր է այն, որ

նրանք, բացի այդ, ստիպված են Ադրբեջանին զիջել Լեռնային Ղարաբաղի հարավային երկու վարչաշրջաններ՝ Շուշին և Հադրութը: Այստեղ խոսքը հնուց ի վեր հայերով բնակեցված՝ նրանց ներկայության բազմաթիվ մշակութային վկայություններով լի տարածքների մասին է: Պետք է երկյուղել, որ նրանց արտաքսմանը կհետևի մշակութային ժառանգության սիստեմատիկ ավերումը՝ լոկ ոչնչացնելու համար այն վկայությունները, որոնք ապացուցում են պատմական իրավունքը:

Ավերում կամ «աղվանացում»

Այն, թե որքան հիմնավոր են այդպիսի վախերը, ցույց են տալիս ոչ միայն ընթացիկ իրադարձությունները, այլև ոչ վաղ անցյալի դեպքերը. այսպես, Ադրբեջանի Նախիջևան գավառում հայկական հուշարձանների մեծագույն մասն ավերվեց: Միայն 2005 և 2006 թթ., հիմնականում համաշխարհային հանրության կողմից աննկատ, ավերվեց Ջուլֆայի հայկական հայտնի գերեզմանատունը՝ 5-17-րդ դարերի հազարավոր տապանաքարերով ու խաչքարերով: Դրանց արձանագրությունները հանդիսանում էին պատմական առաջնակարգ աղբյուրներ, որոնք այժմ անվերադարձ կորած են:

Ավերումից բացի՝ հայկական եկեղեցիներին ու վանքերին սպառնում է ևս մեկ՝ «աղվանացման» վտանգը: Ավելի քան հիսուն տարեկան է ներկայումս ադրբեջանցիների կողմից ծայրահեղ հարձակողականորեն տարածվող, բայց ոչ պակաս անհեթեթ թեզը, որ Լեռնային Ղարաբաղի հայկական հուշարձաններն աղվանական են: Այդ աղվանցիների դեպքում խոսքը Անդրկովկասի արևելքում գտնված մի փոքրիկ քրիստոնյա ժողովուրդի մասին է, որի հետքերը, իհարկե, կորել են տասնմեկերորդ դարում: Ադրբեջանում հայկական մի քանի եկեղեցիներ նախկինում արդեն ենթարկվել են այդ աղվանացմանը՝ այդ կառույցներում փորագրված հայկական արձանագրությունները ադրբեջանցիների կողմից հեռացնելու միջոցով, ինչպես դա տեղի ունեցավ 2004 թ. Նիժում, որտեղ հայկական եկեղեցին նախապես վերականգնվել էր Նորվեգիայի օգնությամբ:

Ներկայումս աղվանացումից հարվածներ է ստանում Դադիվանքի՝ մեծ և լավ պահպանված վանական համալիրը, որը հանդիսանում է Հայ առաքելական եկեղեցու կարևոր կենտրոն և որը 13-րդ դարի առաջին կեսին կազմում էր Վախթանգյան հայ իշխանական տոհմի հոգևոր և աշխարհիկ կենտրոնը: Դադիվանքը գտնվում է Քելբաջարում՝ Լեռնային Ղարաբաղը շրջապատող՝ ադրբեջանական յոթ վարչաշրջաններից մեկում, որն այժմ պետք է վերադարձվի Ադրբեջանին: Պատմական յուրացումն իրեն երկար սպասեցնել չտվեց: Ադրբեջանի մշակույթի փոխնախարար Անար Քարիմովն առանց երկար մտածելու հայտարարեց, որ վանքն «աղվանական» է, և հանդգնեց ասել, որ Դադիվանքը «կառուցել է Աղվանքի իշխան Վախթանգի կինը»: Այսպիսով, պետք է երկյուղել, որ գլխավոր Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի՝ հակառակը պնդող հայկական ընդարձակ հիմնադիր արձանագրությունը, որը տրամադրում է կառուցման թվականը՝ 1214, այլևս երկար գոյություն ունենալ չի կարող: Հնարավոր է՝ նույն ճակատագիրը բաժին հասնի ճակատային այդ կողմի՝ հիմնադրի կողմից արված պատկերներին: Դրանք ներկայացնում են եկեղեցու հիմնադրի՝ Արզու Չաթունի որդիներին՝ եկեղեցու մանրակերտի հետ մեկտեղ:

Հետազոտման՝ երախտագիտության արժանի առարկաներ

Վտանգվածության առումով, անկասկած, առաջին տեղում են գտնվում խաչքարերը, որոնք, որպես կանոն, բովանդակում են արձանագրություններ: Այդ խաչքարերի պարագայում խոսքը միայն Հայաստանում հանդիպող՝ մինչև երկու մետր բարձրությամբ, երկայնքով ուղղանկյուն տուֆե սալերի մասին է, որոնք հմուտ զարդարված են բարձրաքանդակներով և, որպես հիմնական մոտիվ, միշտ հանդես են բերում կենտրոնական խաչ: Հայաստանում դրանք ամենուր են: Դրանց կարելի է հանդիպել վանքերի տարածքում, որտեղ դրանք կանգնեցվում էին եկեղեցիների շքամուտքի առջև, որպես տապանաքար ագուցվում գետնին կամ որմնափակվում սրբատեղիի շինությունների ճակատներին: Խաչքարերը եզրազարդում են հին մայրուղիները, կանգնած են լեռնանցքերի բարձունքներին կամ նշագծում են մշակութային-պատմական նշանակության վայրերը: Դրանց գործառույթը, ըստ գտնվելու վայրի, բազմազան է: Դրանք միաբանական շրջանի սրբազան հողը բնորոշում են որպես մի տեսակ կրոնական կալվածք, որպես գերեզմանաքար պահում են հանգուցյալների հիշատակը, որպես հուշատախտակ՝ նահատակների հիշատակը: Դրանք ծառայում են ժողովրդական բարեպաշտության առանձնակի կարիքներին, և իրենց՝ խաչի գերիշխող մոտիվով ունեն առնվազն քաղաքական գործառույթ՝ որպես հայոց ազգային եկեղեցու խորհրդանիշ:

Արվեստի պատմաբանների համար դրանք հետազոտման՝ երախտագիտության արժանի առարկաներ են, քանի որ ոչ մի տեղ, հայկական արվեստից բացի, ռճական զարգացումը դարերի ընթացքում այնքան ճշգրտորեն չի գծագրվում, որքան դրանց պարագայում: Նախ և առաջ դա պայմանավորված է արձանագրություններով, որոնք ծածկում են ազատորեն կանգնած բազմաթիվ քարերի ետևի հարթ կողմը և տեղեկություններ են տրամադրում դրանց ստեղծման ժամանակաշրջանի, նվիրատուի, ինչպես նաև՝ հաճախ քարագործի մասին: Քանի որ այդ՝ Հայաստանին այնքան բնորոշ խաչքարերը չեն կարող աղվանացվել, Ղարաբաղի հարավային երկու վարչաշրջաններում դրանց ավերումը, հավանաբար, ծրագրավորված է և արդեն ընթացքի մեջ է: Գերմանահայ իրավաբանների միությունը (ԳՀԻՄ), որը Գուրգեն Պետրոսյանի ղեկավարությամբ անձնվիրաբար ջանում է, ըստ Հաագայի կոնվենցիայի դրույթների, մատնանշել նաև հայկական մշակութային արժեքների և հուշարձանների ավերումն ու պղծումը և գանգատագրի միջոցով հարցին հետամուտ լինել իրավաբանորեն, միայն Հադրութի և Շուշիի շրջանների համար ցանկագրել է 11-րդ դարի 144 խաչքար, և այդ ցուցակը դեռ նախնական է:

10-րդ և 11-րդ դարերում՝ իրենց Բագրատունյաց տոհմի ծաղկման շրջանում, կամարակապման տեխնիկայում հայերը հասան այնպիսի վարպետության, որ Տրդատին՝ միջնադարի խոշորագույն հայ շինարար վարպետին, 989 թ. պատիվ վիճակվեց վերանորոգել Կ. Պոլսի Այա Սոֆիայի գմբեթը: Նաև կառույցի տեսակների ընտրությամբ պարզվեց, որ հայերն էքսպերիմենտի սիրահարներ են: Այստեղ կարելի է հանդիպել քրիստոնեական ճարտարապետության գրեթե բոլոր տարբերակներին, որոնց մեջ վաղ շրջանում առանցքային տեղ էին զբաղեցնում կենտրոնական՝ խաչաձև գմբեթավոր, քառանիստ, վեցանիստ և ութանիստ կառույցները: Հայկական ճարտարապետության մեկ այլ առանձնահատկություն է, ի տարբերություն, օրինակ, Բյուզանդիայի, ճակատների շեշտադրումը քանդակագործական մոտիվներով: Դրանք մատուցում են աբստրակտ և բուսական կաղապարներով համակցված

պարզ ժապավենավոր զարդաքանդակներից մինչև խոշոր ձևաչափի պատկերավոր բարձրաքանդակներ:

Մի տեսակ քարակերտ արխիվ

Ադրբեջանցիների կողմից գրավված Շուշի և Հադրութ վարչաշրջաններում կարելի է փաստել միայն 13 հայկական վանք, ինչպես նաև՝ 51 եկեղեցի, որոնք մասամբ հիմնադրվել են վաղ միջնադարում: Անդրտարածաշրջանային ամենանշանակալից երկու հուշարձանները, անկասկած, Գչավանքի և Մոխրենիսի Օխտը դռնի (Յոթ դարպասների եկեղեցի) եկեղեցիներն են: Երկուսն էլ տեղակայված են Հադրութից արևմուտք: Գչավանքը հիմնադրվել է ութերորդ դարում: Ներկայիս վանական համալիրը հիմնականում ծագում է 13-րդ դարից: Վանքի եկեղեցու հյուսիսային պատի հիմնադիր արձանագրությունը 1241-48 թթ. նշում է՝ որպես եկեղեցու կառուցման ժամանակ, իսկ Ամարասից երկու հայ եպիսկոպոսների՝ որպես շինարարներ: Գչավանքը, որպես մի տեսակ քարե արխիվ, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ այն ունի բազմաթիվ արձանագրություններ, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում 13-18-րդ դարերի տեղական պատմության վերաբերյալ:

Թեև պահպանվում է Օխտը դռնի եկեղեցու միայն իրանը, բայց եկեղեցու ավերակներն էլ նշանակալից են արվեստի պատմության տեսանկյունից. այո, խոսքը ամբողջ Լեռնային Ղարաբաղում միակ քառանիստ կառույցի մասին է: Հայերը կենտրոնական շենքը նույնիսկ համարում են իրենց ամենահին քրիստոնեական հուշարձաններից մեկը և այն թվագրում են 570 թվականով: Միջնադարում Օխտը դռնին ուխտատեղի էր և, հավանաբար, նաև վանք: Այդ ցույց են տալիս այլ շինությունների մնացորդները: Դրա վերջնական ավերումն անփոխարինելի կորուստ կլինի:

Երկյուղալի հարց է նաև այն, թե արդյո՞ք վտանգված է նաև Գանձասարի հայտնի վանական համալիրը՝ Լեռնային Ղարաբաղի ամենահայտնի ճարտարապետական հուշարձանը, որը կարող է համաշխարհային մշակութային ժառանգության կարգին հավակնել: Ներկա պահին հնարավոր է, որ այստեղ ահազանգի վերջը տրվի: Գանձասարը գտնվում է Մարտակերտի վարչաշրջանում, որը վերահսկվում է Հայաստանի կողմից: 1216-38 թթ. կառուցված վանքի եկեղեցին հատկանշվում է ճարտարապետական հարուստ դեկորով և Հայաստանում հազվադեպ հանդիպող ընդարձակ պատկերագրական ծրագրով, ներառյալ արտաքին ճակատի՝ խաչելության հայկական առաջին պատկերներից մեկը: Թմբուկը ներկայացնում է հարթաքանդակում պահանջվող մոտիվների մեծագույն մասը՝ օրինյալ Քրիստոսը՝ Ադամի, Եվայի և օձի հետ կապված մեղանչման դեպքի առնչությամբ, բացի այդ՝ Քրիստոսի թաղումը,Աստվածամայրը մանկան հետ, ինչպես նաև այստեղ կարելի է տեսնել երկու հիմնադիրների կերպարանքը՝ եկեղեցու մանրակերտով:

Մնում է սպասել՝ արդյո՞ք Գանձասարը և շատ այլ հայկական եկեղեցիներ ու վանքեր կարող են պաշտպանվել նաև ապագայում: Այս կռվում իրենց հաջողությունից հետո ամբողջ Ղարաբաղի տարածքի նկատմամբ ադրբեջանցիների ցանկությունները, անկասկած, չեն պակասում: Է՛լ ավելի վախենալու է, որ Հայաստանի Հանրապետության հարավային մասն ընկած է ծավալապաշտական նկրտումների կիզակետում: Այնտեղ միայն 20-40 կիլոմետր լայնությամբ, մինչև Իրանի սահմանը հասնելող հայկական «երիզ» Նախիջևանը, որպես ադրբեջանական էքսկլավ, բաժանվում է մայր հանրապետությունից:

Ուլրիխ Բոկը արվեստի պատմաբան է: Նա ստացել է հայ ճարտարապետության դոկտորի կոչում և գրեց «Վրաստան և Հայաստան» արվեստի ուղեցույցը («DuMont»):

Սկզբնաղբյուր՝ **“Frankfurter Allgemeine Zeitung”**(https://www.faz.net/-gsf-a6o5f)